

**1715 «ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

<p><b>Պաշտոնի (զբաղմունքի) անունը</b></p>	<p>Բժշկական սարքեր սպասարկող օպերատոր, տեխնիկ</p>
<p><b>Դերը</b></p>	<p>Օպերատորը, տեխնիկը հսկում է բժշկական էլեկտրոնային չափիչ և ախտորոշիչ սարքերի, սոնոգրաֆների, ռենտգենյան ախտորոշիչ համալիրների, վիրահատական լուսատուների, ինգալիացիոն անոզայացման , թոքերի արհեստական օդափոխության սարքերի, դեֆիբրիլյատորների, վիրաբուժական արտածծիչների, ավտոկլավների, տաք չոր օդային ախտահանիչների, ֆիզիոթերապևտիկ սարքերի տեխնիկական վիճակը, բացահատում և իրեն վերաբերող մասով վերացնում է թերությունները, կատարում է իրեն վերաբերող տեղադրման աշխատանքներ, կատարում է վերը նշված սարքերի տեխնիկական սպասարկում, կազմում է ծախսվող նյութերի և արագամաշ մասերի աշխատանքյին պահուստային պաշարների ցուցակներ:</p>
<p><b>Խնդիրների բնագավառ 1</b> անսարքությունների և</p>	<p>Բացահայտել սարքերի թերությունների պատճառները</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Տեխնիկը, սարքի տիպին և տեսակին համապատասխան, ուրվագծում է անսարքությունների ենթադրվող պատճառները, դրանցից յուրաքանչյուրի հիմնավորման համար կատարում է անհրաժեշտ ստուգումներ և մատնանշում անսարքության հիմնավոր պատճառը.</p>

<p><b>Կատարման չափանիշները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• սարքի տիպին և տեսակին համապատասխան՝ վերջինիս աշխատանքի առանցքային յուրահատկություններն առանձնացված են.</li> <li>• սարքի տվյալ անսարքության հնարավոր պատճառների շրջանակն ուրվագծված է</li> <li>• անսարքության իրական պատճառներն անսխալ ախտորոշված են</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 2</b></p>	<p>Պահպանելով սահմանված տեխնոլոգիան՝ փոխել պահեստամասերը և հանգույցները</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Տեխնիկը, համաձայն սարքի տեխնիկական սպասարկման ձեռնարկներում նշված տեխնոլոգիաների, ապամոնտաժում և տարանջատում է շարքից դուրս եկած պահեստամասերը կամ հանգույցները՝ պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը և ռեժիմները տեղադրում է նորերը՝ կատարելով միջանկյալ չափումներ և ստուգումներ.</p> <ul style="list-style-type: none"> <li>• պահեստամասերի ապամոնտաժումը կատարվում է դրանց համար սահմանված ռեժիմները պահպանելով.</li> <li>• պահեստամասերի ապամոնտաժումը կատարվում է՝ պահպանելով աշխատանքների հաջորդականությունը</li> <li>• պահեստամասերի ընտրության ժամանակ օգտագործվել են սարքի սպասարկման ձեռնարկներում նշված ցուցակները, իսկ այդպիսիների բացակայության պարագայում՝ պահպանվել է դրանց էլեկտրական բնութագրերի համատեղելիությունը.</li> <li>• դետալների տեղադրման աշխատանքների հաջորդականությունը և ռեժիմները պահպանվում են</li> <li>• դետալների տեղադրման ճշգրտության ստուգումները կատարվում են:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 3</b></p>	<p>Ստուգել և փորձարկել վերանորոգված սարքերի աշխատանքը</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<p>Տեխնիկը ստուգում է վերանորոգված սարքի աշխատանքը շահագործման բոլոր ռեժիմներում.</p> <ul style="list-style-type: none"> <li>• սարքը շահագործման բոլոր ռեժիմներում նորմալ է աշխատում</li> </ul>

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• ռեժիմների փոփոխությունների ընթացքում աշխատանքի շեղումներ չեն առաջանում</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 4</b></p>	<p>Տեղադրել և կարգավորել իրեն վերաբերող սարքը՝ ուղեկցող ձեռնարկներում համապատասխան թույլատրության առկայության դեպքում :</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Տեխնիկը տեղադրում է իրեն վերաբերող բժշկական սարքերը՝ պահպանելով համապատասխան կանոնները:</p> <ul style="list-style-type: none"> <li>• սարքի տեղադրման վերաբերյալ պահանջները ճիշտ են ընտրված</li> <li>• սարքը, համապատասխան ուղեկցող տեխնիկական ձեռնարկների, ճիշտ է տեղակայված.</li> <li>• սարքի բաղադրամասերի բոլոր միացումները ճիշտ են կատարված.</li> <li>• շահագործման բոլոր նախատեսված ռեժիմներում սարքը ճիշտ է աշխատում:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 5</b></p>	<p>Կատարել սարքի տեխնիկական սպասարկում:</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p> <p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<p>Տեխնիկի կողմից սարքն ուղեկցող տեխնիկական սպասարկման ձեռնարկի պահանջներին համապատասխան, սպասարկման աշխատանքների ցանկի բովանդակության և կատարման տեխնոլոգիայի ճիշտ է ներկայացվում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• սարքի տարբեր հանգույցների աշխատանքը բնութագրող հիմնական չափանիշները ներկայացված են.</li> <li>• սահմանված են աշխատանքի օպտիմալ ռեժիմները.</li> <li>• կատարված է աշխատանքի ռեժիմների կարգավորումը:</li> </ul>
<p><b>Խնդիրների բնագավառ 6</b></p>	<p>Օգտագործողներին խորհրդատվություն է տրամադրում:</p>
<p><b>Աշխատանքային գործընթացը</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Տեխնիկը բժշկական սարքի շահագործողներին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն՝ սարքի պահպանման և ախափան շահագործման վերաբերյալ</li> <li>• ըստ կոնկրետ պայմանների՝ շահագործողը ստացել է օբյեկտիվ խորհրդատվություն.</li> <li>• շահագործողը պարզագույն իրավիճակում կանխում է սարքի շարքից դուրս գալը.</li> </ul>

<p><b>Կատարման չափանիշներ</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• սարքը անխափան շահագործվում է:</li> </ul>
<p><b>Պատասխատվությունը</b></p>	<p>Տեխնիկը պատասխանատու է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• տեղադրման աշխատանքները որակյալ կատարելու համար,</li> <li>• անսարքությունները ճիշտ ախտորոշելու համար,</li> <li>• վերանորոգման աշխատանքները որակյալ կատարելու համար,</li> <li>• սպասարկման աշխատանքները որակյալ կատարելու համար,</li> <li>• նյութերը խնայողաբար օգտագործելու համար,</li> <li>• ճիշտ խորհրդատվություն տրամադրելու համար,</li> <li>• աշխատանքների հետ կապված ծախսումները հաշվելու, վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու համար :</li> </ul>
<p><b>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</b></p>	
<p><b>Լեզուներ</b></p>	<p>հայերեն - գերազանց</p> <p>մեկ օտար լեզու - բավարար</p>
<p><b>Համակարգիչ</b></p>	<p>MS Word - բավարար</p> <p>Internet Explorer` բավարար</p>
<p><b>Գիտելիքները</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>• Էլեկտրատեխնիկայի հիմունքներ,</li> <li>• ռադիոտեխնիկայի հիմունքները,</li> <li>• Տեխնիկական մեխանիկայի հիմունքներ,</li> <li>• Էլեկտրոնային և միկրոպրոցեսորային տեխնիկայի հիմունքներ,</li> <li>• Բժշկական սարքերի և սարքավորումների բազային տեսակները</li> <li>• Էլեկտրատեխնիկական նյութերի ընտրություն,</li> <li>• Աշխատանքային գծագրեր և էլեկտրական սխեմաներ,</li> <li>• Չափագիտություն, ստանդարտավորում և սերտիֆիկացիա,</li> <li>• Ավտոմատիկա և ԱԿՀ հիմունքներ,</li> <li>• Սնուցման աղբյուրներ և փոխակերպիչներ,</li> <li>• Մասնագիտական փաստաթղթերի</li> </ul>

	<p>կազմում,</p> <ul style="list-style-type: none"> <li>• վերանորոգման աշխատանքներում օգտագործվող սարքերի բնութագրերը, նյութերի հատկությունները,</li> <li>• բժշկական բազային սարքերի աշխատանքի սկզբունքները,</li> <li>• ռադիոդետալների պարամետրերի բովանդակությունը:</li> </ul>
<b>Կարողությունները և հմտություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• անսարքությունների պատճառները բացահայտելու կարողություն,</li> <li>• անհրաժեշտ դետալները ընտրելու կարողություն,</li> <li>• սարքավորումներ օգտագործելու հմտություն,</li> <li>• տեղեկատու գրականությունից օգտվելու հմտություն,</li> <li>• գծագրերը և սխեմաները կարդալու հմտություն,</li> <li>• դետալները տեղադրելու և ապամոնտաժելու հմտություն,</li> <li>• սարքավորումների աշխատանքը կարգավորելու կարողություն .</li> </ul>
<b>Վերաբերմունքը</b>	Պարտաճանաչ, կարգապահ, հաղորդակցվող, խնայող, ճշտապահ, մաքրասեր, հումորի զգացում ունեցող, նորը ընկալող:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2

**1715 «ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԵՐԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ՆՈՐՈԳՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ  
ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ**

Մասնագետի «Բժշկական սարքերի սպասարկման» մասնագիտության «տեխնիկ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են.

1. Համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոշի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական

գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է հարց ու պատասխանի կամ համալիր թեստային հարցման միջոցով:

2. Մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է առաջադրված կոնկրետ բժշկական սարքի օրինակով կազմել թերությունների պատճառների հայտնաբերման և դրանց վերացման աշխատանքային պլան՝ մեկ շաբաթվա ընթացքում կատարելով ստորև նշված գործողությունները.

- Կազմել տվյալ սարքի վերանորոգման աշխատանքային պլան:
- Կազմել տվյալ սարքի տեխնիկական վիճակի մասնագիտական ուսումնասիրություն կատարելու համար անհրաժեշտ չափիչ սարքերի, նյութերի և հատուկ գործիքների ցանկ:
- Կատարել տվյալ սարքի տեխնիկական վիճակի մասնագիտական ուսումնասիրություն:
- Կազմել հայտնաբերված թերությունների տեխնիկական նկարագիր:
- Կազմել հայտնաբերված թերությունների հնարավոր պատճառների նկարագիրը:
- Կազմել հայտնաբերված թերությունների հնարավոր պատճառների հետազոտման պլան հիմնական պատճառը կամ պատճառները որոշելու համար:
- Կատարել հնարավոր պատճառների հետազոտում և հիմնական պատճառի կամ պատճառների հայտնաբերում:
- Կազմել հիմնական պատճառի կամ պատճառների վերացման աշխատանքների կատարման պլան:
- Կազմել թերության պատճառի կամ պատճառների վերացման հետ կապված անհրաժեշտ պահեստամասերի, նյութերի և գործիքների ցանկ:
- Կատարել վերանորոգում և կարգաբերում:
- Ստուգել տվյալ սարքը բոլոր նախատեսված աշխատանքային ռեժիմներում:
- Շահագործողին տրամադրել տվյալ սարքի ճիշտ շահագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ:
- Կազմել սարքի վերանորոգման վերաբերյալ ավարտական տեխնիկական փաստաթուղթ:

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունները կատարվել են չափորոշիչներով նախատեսված չափանիշների համաձայն՝ պահպանելով աշխատանքի անվտանգության և հիգիենայի կանոններն ու նորմերը: